

Ա Ր Ա Ր Ա Տ


ԹԻԻԷ. — ՇՐՋԱՆ ԺԳ.

1880

ՏԱՐԻ ԺԳ. ՅՈՒԼԻՍ. 31.

ԿԵԱՆՔԻ ԳԻՆԸ ՄԱՐԳԻՍ ԼԱՄԱՐ.

Թոշող օրեր, շուտ անց կացող տարիներ: Մենք անհամբերութեամբ սպասում ենք թէ երբ կգայ ծաղկալից գարունը, և քիչ ժամանակից յետոյ ախ ենք քաշում ու ասում թէ գարունն ևս անց կացաւ, ինչ որ մենք տախտիկներ, տարիներ, անվերջ օրեր ենք ասում, երբ որ դեռ ևս եկած չեն անց կենալուց յետոյ, տեսնում ենք որ բոպէներ էին, այնպէս շուտ անց կացան: Փոքր տղան շատ ցանկանումէ պատանեկութեան հասակին հասնել, պատանեակն ի նշպէս ցանկանումէ կատարեալ հասակի մէջ լինել: Ախ, ինչպէս շուտ են անց կենում մարդի տարիները և ինքն իր բան ծերութեան մէջ արդէն տեսնում: Տխուր օրտով, կիսատ ու անկատար և ժրնացած ցանկութիւններով, կեանքից չկշտացած փափագներով նայումէ մարդս անց կացած ժամանակի վերայ, որ իւր համար կորած է արդէն, նայումէ այդ անց կացած ժամանակի վերայ, ինչպէս մի երազի վերայ, որ տեսել էր. տեսնումէ, մազերն արդէն ձիւնի պէս ձերմակել են: Միշտ այսպէս է եղել մարդիկների կեանքը. առաջուայ ժամանակի մարդիկը, առաջուայ սերունդները անյայտացել, սրբվել են աշխարհիս երեսից, նոցա հօղն ու փոշին քամին վաղուց ցրուել: Մենք, որ դեռ ևս կենդանի ենք, մեր ցանկութիւններով, ակնկալութիւններով, յոյսերով ու գանգաւներով, այն ենք, ինչ որ նոքա ևս էին ու եղած են: Եւ ինչ որ մենք ենք այսօր, մեզանից յետոյ եղողներն ու ապրողներն ևս աշխարհիս երեսին հազար ու շատ հազար տարիներ յետոյ նոյնը կլինին, երբ որ մեր հօղն ու փոշին ևս արդէն վաղուց ամեն քամիներից ցրուած կլինի:



Մասկանացու մարդիկների ջանք անելը, աշխատելը չէ վերջանում և ամենայն մարդ դարձեալ շատ շուտ ու ժամանակից առաջ է իւր կեանքը վերջացնում: Ամեն մի դար, մի հարիւր տարուայ ժամանակ երեք սերունդ է աշխարհիս վերայ տեսնում, որ գալիս են ու գնում: Բայց ամենքն ոյժ են թափում, գործ կատարում անդադար այնպէս, որ իւր թէ մարդիս կեանքը դադարելու չէ, Հաւարումեն, զիզում փող ու ինչք այնպէս, որ կարծես թէ անվերջ երկար մի կեանք ունին դեռ ևս: Վիճումեն, վիրաւորում, պատերազմում, դաշինքներ կապում այնպէս, որ կարծես թէ յաւիտեան իշխելու են, ծառայութիւնների պաշտօնների մտնում, պատուի, աստիճանների ետեւից ընկնում այնպէս, որ կարծես թէ աշխարհիս վերայ մնացական են ու միշտ պէտքէ ապրին: Իողեր տալով գնումեն, հոգս անում, շինում այնպէս, որ իւր թէ աներն ու կալուածները միշտ իւրեանց է մընալու: այս իւրեանց աշխատութիւնների և ջանքերի մէջ մեռնումեն, և իւրեանց աշխատութիւններով ձեռք բերածն ու ունեցածը ուրիշներին թողնում, և ինչպէս որ մի ժամանակ իւրեանք ուրախացել էին այն ժառանգութեան համար, որ իւրեանց ազգականներն մեռնելով, իւրեանց թողին, այնպէս ևս ուրախանումեն այժմ՝ ուրիշները, որ շատ բանի տէր եղան որովհետեւ մեռան ու իւրեանց մնաց:

Երբ որ նայումես, թէ մարդիկ ի՞նչպէս ամենայն ոյժ, խելք, հնար են բանեցնում գործ կատարելու, բան յառաջացնելու, շատ օգուտ ստանալու, շատ բան ձեռք բերելու, շատ բանի տէր լինելու, անդադար աշխատանք անելու, անդադար յառաջ գնալու, շինելու, գնելու, աւելացնելու, շատացնելու անդադար, պէտքէ կարծես, որ աշխարհիս վերայ մահ, մեռնել չկայ: Եւ եթէ տեսնումեն, որ ուրիշները մեռնումեն, իւրեանց այնպէս է թուում, որ մահը, մեռնելը նոցա համար էր, նոքա էին մահկանացու, իւրեանք անմահ են, որովհետեւ ողջ են, նոցա մահից յետոյ ապրումեն: Լաց ու արտասուքով յետ են դառնում՝ իւրեանց բարեկամների գերեզմանից դէպ ի տուն և մոռանումեն իւրեանց ևս երկար չքաշելն, ու շատ չմնալն աշխարհիս վերայ: ինչպէս որ զինուորները, պատերազմի մէջ տեսնումեն, որ աջ ու ձախ զօրքի գունդերի մէջ իւրեանց ընկերներն սպանվումեն, ընկնում, և յաղթութիւն են աղաղակում ուրախ ուրախ:

Ամենայն օր կլսես, որ խօսումեն խաղաղութեան ու պատերազմի վերայ, երկիրների նոցա վերայ բնական ազգերի հետը այս այն կտորների բաժանվելու և ուրիշ տէրութեան ձեռք անցնելու վերայ, իմ ու քո և միւսի մտքի մէջ դրած բաների վերայ, յաջողած ու չյաջողած գործերի վերայ, տօների, խնջոյքների, ուրախութեան օրերի վերայ, մէկ խօսքով, ամեն մի բանի վերայ: բայց ո՞վ է լսողը, որ նայնպէս շատ խօսեն ընկերութիւնների մէջ, կամ երկու, երեք մարդի մէջ յաւիտեանականութեան վերայ, Քիչ է մնում, որ մարդ կարծէ, որ յաւիտեանականութեան վերայ մտածելը վաղուց ձգած մի հին առասպելի, մի վաղուցվայ առակի նման բան է, որ այլ ևս չի պատահի, որ մարդ կարողանայ լսել, որ պատմումեն: Բայց

այս ամեն բանը զուրսիցն է միայն այդպէս երևում: Մարդիկը միայն լը-
 ումեն ու բերանով չեն խօսում, բայց սաստիկ և ախար կերպով նոցա
 ներսի աչքը անգագար դէպի յախտննականութիւնն է ուղղած: Լուռ են
 մնում, բայց հաւատում են: Գեռ և աշխարհ չմտած աղջիկը որ զար-
 գարվումէ պար գալու գնալու, հայելու առաջին նստած ժամանակն ան-
 գամ յանկարծ անց է կենում մտքից, որ պէտք է մտնի Աշխատանք անող
 մարդը իւր աշխատած փողերն է համարում, բայց փողերի ժնգոցներէ
 հետն մտքն է գալիս իւր մահը: Թագաւոր մարդը, իւր թագաւորական
 թանկագին հագուստներն հագած, իշխանական զաւազանն ձեռին, թագա-
 ւորական աթոռի վերայ նստած, երբ որ մտքիցն անց է կացնում իւր մե-
 ծութիւնն մտքին է գալիս, թէ մահ կայ ու յախտննականութիւն և վե-
 բան զող է գալիս: Ինչ բանի վերայ որ ոչ որ չէ խօսում, նորա վերայ
 են մտք անում ամենքն ևս:

Սե այսպէս ամեն մի մարդ իւր արտաքին կեանքը լուծեամբ կապումէ
 իւր ներքին կեանքի հետ: Մարդ չկայ, որ Աստուծու ու յախտննականու-
 թեան չհաւատայ. բայց թէ ինչպէս կայ նորա համար Աստուծու ու յախ-
 տննականութիւն և ինչպէս է պահում այդ իւր հաւատը, այդ իւր միայն
 մեծ գաղտնիքն է, որ ոչ որի չէ յայտնում: Այս գաղտնիքի մէջն է միայն
 նորա հաղորդակցութիւնը Աստուծութեան հետ և նորան հաւատալն ու
 ապահինին: Ամեն մի մարդ վասխնումէ իւր հաւատի ամենաճաճուկ գաղտ-
 նիքը ու իշխերին յայտնելու, մտածելով, որ իւր բոլորովին ծածուկ պա-
 հելու հաւատի համոզմունքը, իւր համար ամենաթանկագին սրբութիւնն
 պղծած կլինի, որովհետև մի ամենափափուկ խօսք, ընդդէմ իւր ունեցած
 հաւատին, պէտք է իւրեան վիրաւորէ ու պէտք է չկարողանայ ինքն իւրեան
 հակառակ խօսողի ասածն ջրելու: Պատճառ որ, ինչ որ մենք մեր սրտի
 ու հոգու խորքումն հաւատումենք և ինչ որ մենք մեր սրտի ու հոգու մէջ
 ենք, իսկ այն ենք մենք, մենք ամենեին չէինք կամենայ, որ այդ տեսնէ մի
 օտարի աչք, կամ իմանայ ո՛վ և իցէ, կամ կպչի այդ մեր ամենաճաճուկ
 և մեզ համար սուրբ համոզմունքին, որ աշխարհիս մէջ ոչ մի բանի հետ
 չենք փոխի: Ինչ որ երևումենք մենք զուրք, աշխարհիս մէջ մեր վար-
 մունքովն ու կենցաղավարութեամբն, այդ մի տեսակ խելօքութիւն ու
 խելք բանեցնել է և այդպէս մեզ ցոյց տալ ու երևել է ուրիշներին:
 Ամեն մի մարդ իմանումէ, որ այդպէս է, ուրիշն ևս իւրեան նման է, և
 ամեն մի մարդ պատուումէ իւր նման մարդի հաւատի ծածուկ համոզմունքը
 և հետն ևս նորա ուրիշ կերպ երևելը, որովհետև ինքն ևս ուրիշներէց
 նոյնն է պահանջում իւր համար:

Ամենեին հարկաւոր բան չէ ասելը մի մարդին, թէ նա այս աշխարհիս
 մէջ երկու կերպ է ապրում. յիբաւի այդպէս է կեանքը անց կացնում,
 ինքն ևս լաւ դիտէ, Բայց այս երկու կերպ ապրելը, կամ թէ այս երկու
 տեսակ կեանք ունենալը, թէ ինչ կերպով է կապված մարդիս մէջ, այդ
 շատ զանազան է մարդիկներէ մէջ և իւրեանց հոգու, մտքի, սրտի լուսա-

ւարութեան ու կրթութեան ինչ աստիճանի մէջ լինելուց կախումն ունի։ Մինի համար աշխարհային, մարմնաւոր կեանքը աւելի նշանակութիւն ու արժէք ունի քան թէ ներքինն ու յաւիտենականն, ուրիշ մարդի համար երկուսն ևս միևնոյն ու հաւասար աստիճանի են. երրորդը զգումէ որ աշխարհային կեանքը շատ ստոր է յաւիտենական կեանքից։

Բիրտ վայրենի մարդը որ իւր չբացված, չզարգացած խելքի յոգեբովն իւր մարմնական հակմունքին ու ձգտմունքին յագուրդ տալու հետն է, երեխայն որ դեռ ևս բոլորովին անփորձ լինելով ու աշխարհիս ամեն բաներից անտեղեկալ ներկայ ժամանակի բուսկի ետեւիցն է ընկնում, և խելքը միայն այդքանի հասնելով, գերեզմանների վերայ բուսած ծաղիկների հետ խաղում, ասանց մտքից անց կացնելու, որ մի օր ինքն ևս պիտի այդ հողի տակն պառկի. բոլորովին իւր կիրքերի իշխանութեան տակը գանձող աշխարհի մարդն ու աշխարհի մէջ անու՛ն ու պատիւ ունեցող մարդը, որ իւր սաստիկ արհեստական ազնիւ ու փափուկ կենցաղավարութեանը մէջ, ինքն իր բնան պիտի համոզէր, թէ ամենայն բան ոչինչ է, ամեն բան պատահմունք է, ամեն բան մարդիս վերջին շունչի հետը պիտի վերջանայ — այս տեսակ ամեն մարդիկը հոգու ու սրտի զարգացման դեռ ևս ամենաստոր աստիճանի մէջ են։ Աշխարհային ու երկրաւոր բաների հետ սաստիկ կապված մեծանալով, մտքնորիցն չէ անց կենում, որ հոգու զարգանալ ու բարձրանալ կայ, զարգացած հոգու կեանք կայ, որ շատ ու շատ բարձր է մարմնաւոր կեանքից ու մի ջոկ տեսակ բարձր ու վսեմ կեանք է, Աշխարհն ու աշխարհիս կեանքն նոցա համար միակ բան է և ամեն բան։

Բայց աշխարհիս բնակիչների մեծ մասն բոլորովին ուրիշ տեսակ ներքին կրօնի բարձր համոզմունք ունին, որ քիչ կամ շատ մօտ են այն մարդի կրօնական համոզմունքին, որ բերանով է միայն, Այն բազմաթիւ մարդիկը լաւ գիտեն, որ մարդիս մահից յետոյ նորա կեանքը պէտքէ չզոգարի, չվերջանայ, լաւ գիտեն, որ մի աւելի լաւ վիճակի մի աւելի լաւ կեանքի համար միւս աշխարհումն պիտի պատրաստեն իւրեանց։

Բայց հասկացողութիւնն այս ու միւս կեանքի վերայ, թէ ինչ գին ու արժէք ունին, դեռ ևս պարզ ու կատարեալ չեն մարդիս համար։ Մարդս իւր ցանկութիւններովն խիստ կապված ու սիրտը կպած լինելով այն բանին, ինչ որ իւրեան շրջապատումէ, աշխարհին ևս այնքան նշանակութիւն է տալիս, ինչքան արժէք որ երկնքին է տալիս։ Նորա ցանկութիւնն է, որ աշխարհը վայելէր, այս կեանքիս մէջ աշխարհիս վայելչութիւններն քաշէր, և իւր-աւելի շատ հոգան ու բանուզործը այս աշխարհիս կեանքն վայելելու համար է. մի մի ժամանակ այն մտածումէ յաւիտենական կեանքի վերայ ևս, և ինքն սրտով հանդիստ ու գոհ է տեսնում իւր բնան. որովհետեւ երկար երկար աղօթք անումէ, ժամ գնումէ, առանց հազորովելու չէ մնում, ուրեմն Աստուծուն բաւական հաճոյ և ընդունելի կեանք ևս ունի, նորա համար այս ու միւս աշխարհի կեանքի մէջ մի մեծ կապ չկայ։ Ինքն իւրեան ներումէ, թողնումէ հպարտութիւն, խաբկայու-

Թիւն անկուս զեղի կեանք վարելու, նախանձութիւն ունենալու և յոյս ունի որ Յիսուսի Քրիստոսի ունեցած արդիւնքովն իւր ամենայն մեղքերին Թողութիւն կգտնէ այս աշխարհումս և գերազայն կատարելութիւն միւս աշխարհում: Նորա համար միայն ներկայ ժամանակ կայ և նա բոլորովին այդ ժամանակի մարդն է, որի մէջն ապրումէ: Նորա սահմանափակ մտքի առաջին, նորա կարծատես աչքի առաջն յաւիտենականութիւնն դեռ ևս շատ յետոյ լինելու բան է:

Որչափ որ մարդս իւր իսկական կեանքի զինն աւելի է հասկանում, այնքան նորա աչքին փոքր ու աննշան բան է երևում և է շուտ թաշտղ անց կացող երկրաւոր կեանքը: աշխարհիս ամեն անցաւոր բաների հետ միասին և այնչափ աւելի ամեն բանից գերազանց ու անհասմեմատ բարձր է նորա համար յաւիտենականութիւնն: առաքինութիւնն ու Աստուածութիւնը: Երբ որ մի մարդ այն տեղն է հասել, որ փոքր բանով զոհ ու անկարօտ իւր կեանքը անցկացնել կարող է, նորա ինչի՞ն է պէտք չափազանց մեծ հարստութիւն ունենալու վերայ մտածել: Երբ որ նա կատարելութեան այն աստիճանին է հասել, որ հասկանումէ թէ ինչպէս մարդիկ կուրօրէն արտաքին երեւոյթի վերայ նայելով են դատում, և թէ որչափ քիչ են հասկանում ճշմարիտ արժանաւորութիւնը, այլ ևս նորա ինչի՞ն է պէտք, որ անհանդիստ սրտով բաղմութեան կարծիքին նայի անունի, բարձր աստիճանների ետեւից ընկնի երեւելի մարդ է ասեն իւրեան: Ով որ երբեմն աշխարհիս ձախորդութիւններին հանդիպել է և նոցա հարուածների ցաւը կտորած սրտով քաշել է, մի՞թէ այն մարդը դեռ ևս աներկմիտ յոյսով ու տաք սրտով կարող է կպչիլ այս կեանքի որեւիցէ մի բարիքին, որովհետեւ ինքն իւրեան պէտքէ ասէ թէ այս աշխարհիս ամենայն բանն ևս ունայն է:

Իմաստուն մարդը հասկանումէ աշխարհային բանի ոչինչ լինելը. նա դիտէ, որ մարդիս լաւ ապրելը, փառքի, սիրոյ, հարստութեան ետեւից ընկնելը նորան միայն զրկումէ զոհ սիրտ ունենալուց, ոչ թէ աւելացնումէ սրտի հանգստութիւնն. գիտէ, որ սրտի տեղափոխան երջանկութիւնը լինումէ մարդիս մէջ միայն այնպիսի կեանք վարելով, որ մարդս զգումէ ու գիտէ, որ իւր մեծ պարտաւորութիւնները կատարումէ, որ կիրքերի ու ստոր նախապաշարմունքի ազդեցութենից ազատ է: Աստուծու հետ միացած է հոգովն, կեանքովն ու զործերովն և Քրիստոսի սոփօրեցրած վարքովն է ապրում, ցոյց տուած ճանապարհովն է դնում: Այդպիսի մարդը, եթէ երբեմն երբեմն իւր սիրտն աւելի արիւտ ևս երկրաւոր այս այն բարիքին համար, զարձեակ կարող է Քրիստոսի իմաստուն ու բազմափորձ և աշխարհիս ամեն բերմունքից ու ձախորդութիւններից շատ բարձր սիրտ աննցող նորա աշակերտի խօսքը կրկնել թէ, «ի՛մ էդքայրէ՛ք, է- ին) այնպէս չե՛մ համարում, որ է՞ք ինչ որքէն հասած է՛: Ո՞ր բան է՛ միայն ստամբ. է- ուստի այն, ինչ որ եղան է, և յիշատակէ՛ք ինչ որ արեց է, և վաղուտէ՛ք ինչ որ արեց է- ուստի եղած նպատակիս. այն անբնի գնդին համեմատ, որ երբեքստ փոշու-ն է՛ ստացին. բանած է Քրիստոս Յիսուսով»:

Ով է մեզանից, որքան յիրաւի աղնիւ ևս լինի, որ իւր համար կարող է ասել թէ « Ես ի՞նչ արեցիս, որքան ինչ արեցիս, որքան ինչ արեցիս »: Արդէն կատարել եմ. իմ սիրտս ոչ մի երկրաւար բանի վերայ ունեցած աւելի սիրով իբրև շղթայով ու կապանքով կապված չէ: — Ով որ այս խօսքը բերանից հանել կարողանար, նա այլ ևս մարդ չէր լինի, մարդ պէտք չէ համարվեր, այլ մարդկային բնութիւնից շատ բարձր ու գերազանց մի արարած: Գեո ևս մենք մեր մահկանացու մարմնի մէջն ենք. այս մարմինը ունի դեռ ևս իւր պէտքերը, որ Սանդուղի կալքովն պէտքէ կատարվին, եթէ որ ինքնասպանի նման մեզ հետ վարվել չկամենանք: Մեր կեանքի մինչև վերջին րոպէն, մեր գրգայական կեանքը, բնութեան յաւիտենական օրէնքներին համեմատ, իւր կարիքներն ունի, որ պէտքէ կատարվին: Մեր մարմնից ու արիւնից յառաջ եկած ձգտումներն կամ բերմունքն, որչափ որ այն նպատակին համար են, որ մեր կեանքը պահպանեն, մեղանշական չեն, այլ մաքուր ու բարի են: Բայց շատ հեշտ կերպով մենք մեր ցանկութիւնն, այս մեր բերմունքն այն աստիճանին ենք հասցնում, որ մեր վերայ իշխումեն սորանից յառաջ են գալիս մեր սրտի կիրքերն ու մեղքը: Մենք մեր ճանապարհից դուրս ենք գալիս մոլորվում, սխալներ անում մինչև մեր վերջին շունչը փչելը:

Մինչև անգամ ամենալաւ քրիստոնեայն ևս կրէք չէ կարողանում ազատ մնալ ներքին պատերազմներից: Ինչ որ նորան շատ պինդ կապով է կապում, նա այն կապը կտրտումէ ու նոր կապեր է կապում իւր համար: Իւր կեանքի վերջին րոպէներում ևս պէտքէ ասէ Պօղոս առաքեալի հետը թէ « ոչ թէ ես ինչ արեցիս, կամ արեցիս, կամ արեցիս, ես ինչ արեցիս »:

Բայց մի բան ասեմ ես. մտնում է, ինչ որ երեսն է, և յիսուն է, քեզից է, ինչ որ է մտնում է: Ես այս աշխարհումս ապրումեմ դեռ ևս ծառայի թող ու անցոր կերպարանքով, բայց իմ բարձր, իմ հոգևոր կեանքս ամեն անցաւոր բաներից դէպ ի վեր է բարձրանում, գնում: Ես իշխումեմ իմ հակմունքիս վերայ և չեմ թողնում, որ ինձ վերայ իշխեն: Ես անումեմ այն բանը, ինչ որ արգար է, ինչ որ աղնիւ է և զորա համար մի վարձատրութիւն չեմ պահանջում: Իմ արած գործը ոչ թէ նորա համար է, որ ինձ գոյնն, հաւանեն, կամ չհաւանեն ու վատ ասեն ինձ, ոչ թէ նորա համար է, որ յոյս ունիմ սակիներ ստանալու շահիս, այլ անումեմ այն բանը ինչ որ իմ ներքին համոզմունքովս պէտքէ և վայելուչ է, որ անէ քրիստոսի մի աշակերտը: Աշխարհը իմ խղճմտանքս ոչ կարող է վարձատրել, ոչ պատժել: Իմ խղճմտանքը իւր վարձատրութիւնն պէտքէ գանկ Աստուծու նմանելուն մէջը և իւր ամենասաստիկ պատիժը Աստուծուց հեռանալուն մէջը: Այս պատճառով այս կեանքիս ամեն վայելչութիւններն չեմ թողնում, որ ինձ կամ դէպի շարն տանեն, կամ դէպի բարին. նոքա իմ մարմնիս, ոչ թէ իմ հոգուս համար են պէտք: Եւ ինչպէ՞ս, քանի՞ս քեզի է մտնում որքան նպատակ, քեզից է, ինչ որ է մտնում է, որ ինչ որ է մտնում է երեսն է, եւ մտնում է քեզից է: Ես Աստուծուց դէպի կրկնաւորն եմ կոչված, որ

Հոգինքրի կեանքովն ապրիմ՝ դէպի կատարելութիւն եմ կոչված, որի մեծութեան ու փառաւորութեան մասին ես իբրև մարդ քանի որ դեռ ևս այս աշխարհիս վերայ եմ ապրում, մի փոքրիկ գաղափար անգամ չեմ կարող ունենալ, բայց սրտիս վկայութիւնը մի բաւազոյն կեանք ունենալու մասին մահից յետոյ այն պարզ զգացումն է, որ իմ մէջս կայ, Այս յաւիտեանական լինելու այս աստուածային լինելու այս աստուածանման դառնալու է այն անգին գանձն, որի ետեւից ընկած եմ ձեռք բերելու, այն գանձը որ Աստուծու երկնաւոր կոչումն ինձ առաջարկուեւէ, Եւ կոչումնս իմ ինչ բանի համար ապրելու ու նշանակված լինելու պարզ հասկանումեմ ես Յիսուս Քրիստոսով և Յիսուս Քրիստոսի մէջ, Պատճառ որ Նա, որ խաւարի մէջ ըլլալս բերեց, Նա է, որ ինձ իւր խօսքովն մուրումնական անգունից դէպի վեր, դէպի Աստուած, դէպի բոլոր աշխարհի Հայրն ու դէպի երջանկութիւնն է տանում, Ես Աստուած կուեննամ, նորա մէջ իմ երջանկութիւնն կգանեմ, երբ որ Քրիստոսի ունեցած կեանքի օրինակին հետեւիմ, վասն զի Նա է միայն ճշմարիտ կեանքի ճանապարհն, Աւրեմն աստուածային ուսուցչի հաւատարիմ աշակերտն շատ չափաւոր դին ու նշանակութիւն պէտքէ տայ այժմեան մեր ունեցած կեանքին այս աշխարհիս երեսին, Նա իւր ժամերն ու ժամանակը պէտք չէ կորցնէ մի մարմին զարգարելու համար, որ նշանակված ու սահմանված է անշնչանալու, փտելու ու հող դառնալու: Ինչ որ Նա կամենուեւէ և անուեւէ, ոչ թէ մարդիկների գատողութեանն ընդդէմ անելու համար է, այլ Քրիստոսի սիրոյն համար, որով կապված է նորա հետ սրտով ու հոգով, Աւրախանուեւէ բարեկամութեան վերայ, ուրախանուեւէ երկու կողմից եղած քնքոյշ սիրոյ վերայ, որ տեսնուեւէ ու զգում իւր սրտի մէջ, բայց իւր զգացմունքը սուրբ չափաւորութեան սահմանի մէջ պահում, սերն անմահ է և միմեանց սիրող էակներն միմեանց են մնում անշափ տիեզերքի մէջը Ժողովն է մահկանացու, Այս պատճառով Քրիստոսի աշակերտն իւր բոլոր երջանկութիւնն մարդիկ ապականացու կեանքի վերայ չէ զնում, Թող սիրէ կինը իւր մարդին, երիտասարդն—իւր սրտի սիրածն ու ընտրածն, հայր ու մայրն—իւրեանց զաւակը, Բայց միեւնոյն ժամանակ միշտ մտքից անց կացնեն, որ մահն պէտքէ մի ժամանակ մեկին միւսից իլէ, բաժանէ, և ի՞նչպէս պէտքէ լինի այն ժամանակ նոցա բազդաւորութիւնը: Սարսափումս դու, վախենումես, որ սիրեկանիդ կորցնելովդ բոլոր քո երջանկութիւնիցդ զօկվիս, եթէ որ այդպէս է — ինչ զրուութեան մէջ ևս այդ միջոցին որ լինիս—ուրեմն յայտնի տեսնումեւ, որ դեռ ևս սաստիկ կպած ես սրտովդ աշխարհին, յայտնի երևումեւ, որ սաստիկ է քո մէջդ մարմնաւոր սերը և դու կրքից ազատ չես: Ազատ ևս չես լինիլ, մինչև որ քեզ չզօրացնես յաւիտեանական կեանքի յայտով և այդպէսով քեզ արձակ ու ազատ պահել կարողանաս երկրայինից այն աստիճան, որ աշխարհիս մէջ քո սրտի սիրեկանը կորցնել կարողանաս ու նորա հետ քո հոգու երկնային հանգստութիւնը չկորցնես: Արչափ որ այս երկրաւոր կեանքս, այն ամեն բաների հետ միա-

